

Հիմնադրվել է 1925 թվականին: Այն ժամանակ կոչվել է «Արզնի» հանքային ջրերի գործարան: Սկզբում եղել է միայն ձեռքի աշխատանք, շշալցումը կատարվել է մի փոքրիկ սենյակում:

1929 թվականից գործել է որպես փոքր գործարան և սկսվել է հանքային ջրերի մասսայական արտադրությունը: Մեքենայացվել և ծավալները մեծացել են 60-ական թվականներին:

1968 թվականից աշխատել է 2 չեխական հսքագիծ, որը մեկ ժամում լցրել է 6000 շիշ:

Աշխատել է լցման արտրադրամասը CO 2 արտրադրամասը: Արտրադրանքը արտահանվել է ԽՍՀՄ բոլոր հանրապետություններ, Պարսկաստան: 1974 թվականին գործարանը տեղափոխվել է Արզնի ավան (այժմյան Բյուրեղավանի տարածքը), արտադրությունը մեծացել է տեղադրվել են 3 նոր հոսքային գծեր՝ 12-հազարանոց և 24-հազարանոց:

Աշխատանքը եղել է 3 հերթափոխով: Աշխատողների թիվը հասել է մինչև 500-ի:

Գործարանը տարեկան արտադրել է 50-60 մլն շիշ հանքային ջուր: ԽՍՀՄ հանրապետությունում որպես բուժիչ ջուր վաճառվել է դեղատներում:

Գործարանը աշխատողների համար կառուցել է 3 հանրակացարան, 1 բնակելի շենք:

1995 թվականին մասնավորեցվել է, 1997-ից սկսվել է մարման գործընթացը:

2002 թվականին վերագործարկվել է, վերանվավելով՝ «Բ. Մ. Լ. Արզնի» ՍՊԸ: Արժանացել է “ ISO” մրցանակի (2002 թվականին):

2003 թվականին մասնակցել է «ԱրմՊրոէքսպո» ցուցահանդեսում՝ խմելու հանքային ջրերի մրցանակաբաշխությանը, շահել է 1-ին մրցանակ՝ «Ոսկե մեդալ» և դիպլոմ: 2003 թվականին «Բ. Մ. Լ. Արզնի» ՍՊԸ -ում արտադրվող հանքային ջուրը արտահանվում էր Կանադա, Լիբանան, Արցախ:

{comments off}